Армянский Колледж

Учитесь говорить на АРМЯНСКОМ языке

+7 904 506 91 28

Նամակ Զմեռ պապին

Սիրելի Զմեռ պապ, իմ մանկության երազ, այսքան տարի քեզ երբևէ նամակ չեմ գրել, ինչպես սովորաբար Ամանորից առաջ անում են մանուկները, կուրորեն հավատալով, որ դու կատարում ես նրանց նվիրական ցանկությունները: Եվ առավոտյան արթնանալու պես եղևնու տակ գտնելու են այդքան սպասված նվերը:

Ահա այսօր գրում եմ քեզ, որպես մի փոքրիկ մանուկ, որ ապրում է յուրաքանչյուրիս մեջ և ուրախ եմ, որ իմ մեջ նույնպես չի կորել այդ փոքրիկ երեխան, չէ որ նա միշտ օգնում է կյանքը տեսնել ավելի վառ գույներով, պայծառ և գեղեցիկ:

Վաղուց արդեն երեխա չեմ, մեծացել եմ, բայց հավատում եմ ամանորյա հրաշքներին: Այդպիսի մի հրաշք ես գտել եմ իմ կյանքում: Այսօր այս նամակով պարզապես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել քեզ այդ հրաշքի համար: Այս տարի խնդրում եմ միայն, որ անվերադարձ ինձ մոտ թողնես այդ գունավոր հեքիաթը:

Շնորհակալ եմ, որ կաս մեր բոլորի կյանքում և ամեն տարի նվիրում ես մեզ հեքիաթային անամոթյա գիշեր: Հենց այդ օրը, մենք բոլորս, թեկուզ և մեկ օրով, վերադարձնում ենք մեր մանկությունը:

Զմեռ պապ, գիտեմ, որ միշտ դու ես շնորհավորում մեզ, բայց թույլ տուր ես էլ քեզ ասեմ. Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Մարատ Բագրատյան

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ

Ժ ժ

ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Ժամացույցը պատվարժան
Ծլնգում է ամեն ժամ,
Հուշելով՝ մի մոռացեք,
անցկացավ ևս մեկ ժամ…

Ի՞նչ հասցրիք մի ժամում,
Որ հաջորդն է ժամանում:

Ի ի



ԻՆՔՆԱԿԱՄ ՉԵՆ

Ինքնաթիռը ինքնակամ չէ,
Մեր կամքին է ենթակա:
Նույնն է նաև ինքնաեռը
Եվ մեքենան ինքնաթափ:
Ինքնահոսն էլ նրանց նման
Մոլորված է այդ հարցում,
Եվ ինքն իրեն այս տողերի
Հեղինակն է նա կարծում:

Լ լ

ԼՈՐԻԿ

Լորիկ, լորիկ, ա՜յ լորիկ,
Փախար մեր հանդ ու ձորից,
Չլինի՞ թե պատճառը
Շեկլիկ -բկլիկն է նորից:

Рубрику ведет преподаватель армянского языка Армине Варданян

Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից

Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը

КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМАВОНЯН



Кроссворд № 10

По вертикали:
1. Кружева. 2. Час, время.

По горизонтали:
2. Скала. 3. Мышь.



Кроссворд № 11

По вертикали:
1. Самолёт. 3. Русский.

По горизонтали:
2. Гранат.



Кроссворд № 12

По вертикали:
1. Окно

По горизонтали:
2. Груша.

Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симавонян

Օրերի հետ

Ամանորն արդեն մոտենում է

Շուտով Ամանոր է. այն թերևս աշխարհի ամենաբարի տոնն է՝ լի լուսավոր ապագայի սպասումներով, երազանքների իրականացման նկատմամբ հավատով: Արդեն փողոցներում նկատելի է ամանորյա իրարանցումն ու եռուզեռը, շուտով խանութներում հերթեր կգոյանան, ամանորյա գնումների ցուցակը ձեռքներին հոգնատանջ ու «մունաթ» դեմքերով մարդիկ սուպերմարկետից-սուպերմարկետ կշտապեն՝ անընդհատ բողոքելով թանկացումներից, Նոր տարվա այդքան ծախսերի անիմաստությունից:

Ռուսաստանում էլ, հայերս չենք հեռանում մեր հայկական իրականությունից, չենք կարողանում վերջապես ազատվել հոգսերից, թեթև նայել այդ ամենին, լիաթոք ուրախանալ, ինչպես դա անում է մեր բարեկամ ռուս ժողովուրդը: Հայկական, թվում է թե անփոփոխ իրականություն: Ամեն տարեմուտին նույնը, նույն փնթփնթոցը, նույն բողոքը, նույն «Վա~յ, էս Նոր տարին ինչի՞ եկավ» արտահայտությունը: Բողոքում ենք ու ուզում հետ չմնալ ոչ-ոքից, զարմացնել մեր սեղանների առատությամբ, չենք խնայում վերջին խնայողությունն անգամ, վերջում էլի բողոքական դեմքով, վազվզոցից հոգնած սպասում, թե երբ պիտի գա ժամը տասներկուսը, տարին փոխվի ու սկսի տնից-տուն գնալը. հարազատին, բարեկամին, ընկերոջն ու հարևանին շնորհավորելու… նույն բարեմաղթանքներն ասելու, լսելու… ու այսպես շարունակ ամեն տարի…

Համեմատության համար ներկայացնենք, թե ինչպես են Ամանորը տոնում տարբեր երկրներում: Օրինակ՝ Իտալիայում Նոր տարին սկսվում է հունվարի վեցին: Իտալացիները համարում են, որ տարին պետք է սկսել հին իրերից ազատվելով, ուստի Նոր տարվա գիշերն ընդունված է պատուհաններից դուրս նետել հին իրերը: Պատուհաններից դուրս են թռչում հին արդուկներ, աթոռներ և այլ հնոտիք: Նրանց սեղանին անպայման պետք է լինի ընկուզեղեն, ոսպ և խաղող՝ երկարակեցության, առողջության և բարեկեցության խորհրդանիշներ: Չեխիայում և Սլովակիայում մեծ անհամբերությամբ են այս տոնին սպասում երիտասարդ աղջիկները, չէ՞ որ հենց Ծննդյան օրվա գիշերն են իմանում կամուսնանա՞ն, թե ոչ: Ապացույցը տնային հողաթափն է, որը նրանք պետք է գլխի վրայով նետեն դեպի դուռը: Եթե հողաթափն ընկնի քիթը դեպի դուռն, ապա շուտով փեսացու կհայտնվի, իսկ եթե դեպի սենյակը, ապա աղջիկը ստիպված է սպասել ևս մեկ տարի: Իռլանդիայում Նոր տարվա նախօրեին՝ երեկոյան, բոլորը բացում են իրենց տան դռները: Յուրաքանչյուր ոք կարող է մտնել ուզած տունն ու ցանկալի հյուր կհամարվի այնտեղ նրան կընդունեն մեծ ուրախությամբ, կնստեցնեն պատվավոր տեղում, կհյուրասիրեն մի բաժակ ընտիր գինի՝ չմոռանալով ասել «Թող խաղաղություն լինի այս տանն ու ամբողջ աշխարհում»: Հաջորդ օրը յուրաքանչյուր ոք տոնը դիմավորում է իր տանը: 12-անց կեսին իռլանդացիները դուրս են գալիս քաղաքի կենտրոնական ու տոնական զարդարված հրապարակը: Բուլղարիայում, երբ մարդիկ հավաքվում են տոնական սեղանի շուրջը, բոլոր տներում երեք րոպեով լույսերը հանգցնում են: Այդ րոպեներն անվանում են «ամանորյա համբույրների րոպեներ», որոնց գաղտնիքը պահպանում է մթությունը:

Գիտենք, որ հին Հայաստանում Նոր տարին կոչվել է Նավասարդ: Այդ տոնակատարության օրերին հեթանոս հայերը հինավուրց նվագարանների մեղեդիների և ծիսական երգերի ուղեկցությամբ Արամազդ աստվածահոր և Անահիտ դիցամոր մեհյաններում երինջներ և ցուլեր էին զոհաբերում: Նավասարդը երգի ու պարի, որսորդության, խաղերի ու խրախճանքների տոն էր: Այդ օրը բոլորը հագնում էին տոնական զգեստներ, գերակշռում էր կարմիրը, որպես արևի, ուրախության, երջանկության խորհրդանիշ: Պատանիներն ու աղջիկները տնից-տուն էին շրջում Ամանորի երգերով և իրենց բարեմաղթանքների դիմաց նվերներ ստանում: Տանտիրուհիները նվերներ էին ուղարկում նորահարսներին ու նորափոսաներին, պատրաստում էին մարդկանց, ընտանի կենդանիների, կենցաղային իրերի նմանությամբ ծիսական հացիկներ, թխում էին տարի կոչվող ավանդական կլոր գաթան, որի խորիզի մեջ դրված մետաղադրամը որոշում էր, թե ով է լինելու ընտանիքի ամենաբախտավոր անդամը եկող տարում: Ամանորի ծիսական 7 կերակուրների մեջ մեծ տեղ էր հատկացվում ցորենի հատիկներից կորկոտ և չոր մրգերից պատրաստվող կերակուրներին:

Ներկայումս, իհարկե, շատ ենք հեռացել Ամանորը նշելու մեր նախնիների սովորությունից: Պահպանված հայկական ավանդույթի համաձայն՝ ինչքան առատ սեղաններով դիմավորենք Նոր տարին, այնքան առատ ու հաջողակ տարի կլինի: Բայց փորձը ցույց է տալիս, որ չնայած բոլորն էլ ջանք ու գումար չեն խնայում սեղանների առատությունն ապահովելու համար, այնուամենայնիվ, տարին միշտ չէ, որ բարեհաճ է լինում բոլորիս նկատմամբ: Գուցե պատճառն այն է, որ մի տեսակ պարտավորված ենք դիմավորում Ամանորը, առանց անկեղծ ուրախության: Եկեք ուղղակի այս գեղեցիկ տոնը չվերածենք «մրցապայքարի», հարևանից կամ բարեկամից հետ մնալու վրա: Ամանորը դիմավորենք մաքուր սրտով, խղճով, անկեղծ ուրախությամբ, ժպիտներով, բարությամբ, երգ ու պարով, հավատով, որ մեր բոլոր երազանքներն իրականանալու են. չէ՞ որ Ամանորի գիշերն իրոք հրաշքները կատարվում են: Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

Արմինե Հովսեփյան